

ՀՈՒՆԱՐԵՆԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԴԱՍԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ  
ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

ԳՈՂԱՐ ՄՈՒՐԱԴՑԱՆ

5-րդ դարում սկիզբ առած հայ դրական լեզուն անխուսափելիորեն ենթարկվել է հունարենի ազդեցությունը. այն հավանաբար զգալի էր նաև քրիստոնեությունից քարոզման նախագրական՝ մեկդարյա ժամանակահատվածում, երբ քարոզիչները բանավոր թարգմանություններ ունենալու համար էին մատուցում հունարեն կամ ասորերեն գրի առած տեքստը՝ Սակայն առաջին թարգմանիչները գործ ունեին լայն զանգվածների հետ, հետևաբար ձգտում էին գրել հնարավորին չափ հասկանալի, բնական լեզվով և խուսափել հունարենի ազդեցությունից<sup>3</sup>: Եղնիկ Կողբացու թարգմանությունները պահպանված՝ 4-րդ դարի հայտնի եկեղեցական գործիչ Եվսեբիոս Եմեսացու «Ութամատյանի մեկնություն»<sup>4</sup> առաջաբանի հետևյալ խոսքերը, Գ. Սարգսյանի համոզմամբ, այդ շրջանի թարգմանիչների «հուշակագրի պես մի բան» կարելի է համարել. «Եթե մեկը կամենա որևէ լեզվի միտքը նրա իսկ բառերով թարգմանել, ապա չի կարողանա բացահայտել օգտագործված բառերի իմաստը: Քանզի յուրաքանչյուր լեզվում կան բազմաթիվ յուրահատուկ դարձվածներ, որոնք իրենց տեղում թեև գեղեցիկ, պարզ, արտահայտիչ և պատշաճ են թվում դրանք օգտագործողների համար, բայց երբ նույն բառերով այլ լեզու են փոխադրվում, չեն արտահայտում մտքի բովանդակությունը... Քանզի անհրաժեշտ է վերանալ ցանկացած լեզվի յուրահատուկ արտահայտչաձևերից և լեզվի միտքը թարգմանել ու վերաշարադրել... Եթե մեկը թարգմանություն այս սկզբունքով չի դեկավարվում, ապա բազում հոգս է պատճառում ընթեր-

<sup>1</sup> Գ. Զահուկյանը բերում է հունարենից փոխառյալ 107 բառ և 52 հատուկ անուն, որոնք կարող էին 5-րդ դարից վաղ մտած լինել հայերենի մեջ (Գ. Զահուկյան, Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Երևան, 1987, էջ 615-630):

<sup>2</sup> Այսպես կոչված «հետերոէսպիկ ընթերցման» ընթացքում (Գ. Սարգսյան, Հայոց գրական լեզվի պատմական փուլերը պատմաբանի հայացքով, ՊԲՀ, 1990, N 4, էջ 22-30):

<sup>3</sup> Ասորերենից թարգմանությունները պատկանում են ամենավաղ շրջանին և թվով զգալիորեն գիջում են հունարենից թարգմանված երկերին: Դրանցում տեղ գտած ասորաբանությունների մասին տե՛ս Ա. Ա. Тер-Петросян, Сиро-армянские литературные связи. Автореф. дис. на соискание ученой степени доктора филол. наук, Л., 1986, с. 24-28: Տեր-Պետրոսյանի կարծիքով, ասորաբանությունները համեմատելի են դասական շրջանի թարգմանություններում հանդիպող հունաբանությունների հետ. երկու դեպքում էլ դրանց կիրառությունը գիտակցված չէ և, թերևս, հետևանք է թարգմանիչների փորձառությունից պակասի, մինչդեռ հունաբան դպրոցի թարգմանիչները գիտակցված ու ծրագրված եղանակով հայերենի մեջ են ներմուծել հունարենի շարահյուսական դարձվածներ ու քերականական կատեգորիաներ (էջ 27):

<sup>4</sup> Եվսեբիոս Եմեսացի, Մեկնություն Ութամատեան գրոց Աստուածաշնչին, աշխատասիրություններ հ. Վ. վարդապետի Յովհաննիսեան, Վենետիկ, 1980:

ցողներին...»<sup>5</sup> :

Հաջորդ սերնդի թարգմանիչների թարգմանած ավելի բարդ աստվածաբանական երկերը (Աթանաս Աղեքսանդրացու, Բարսեղ Կեսարացու, Գրիգոր Նազիանզացու, Գրիգոր Նյուսացու) պետք է ավելի պատրաստված ընթերցող ակնկալեին: Դրանք կազմում են «նախահունարան» թարգմանությունների խումբը: դրանցում կան զգալի թվով հունարենից պատճենված բառեր, շարահյուսությունն էլ բավական խրթին է հունարենի ազդեցություն պատճառով: Սակայն ընթերցողների հոգան իսկապես «բազմացավ» դրանց հետևած հունարան դպրոցի թարգմանությունների (5-րդ դարի վերջերից մինչև 8-րդ դարի առաջին երեք տասնամյակները) ի հայտ գալով: Դրանք հիմնականում «դիտական» ժամանակի տարբեր մակարդակների դպրոցներում ուսումնասիրվող գրվածքներ էին, թեպետ հունարան լեզվով թարգմանվել են նաև մի շարք կարևոր աստվածաբանական երկեր: Այդ բարդ երկերը վերին աստիճանի ճշգրիտ՝ բառ առ բառ, իսկ հնարավորություն դեպքում նաև ձևույթ առ ձևույթ (խոսքը բառապատճենումների մասին է) թարգմանելու պահանջը հանգեցրեց հունարենի ազդեցություն շոշափելի աճի, իսկ որոշ թարգմանություններում այնպիսի արհեստական լեզվի, որն էլ ավելի դժվարեցրեց առանց այդ էլ բովանդակությունը ոչ պարզ գրվածքների ընկալումը:

<sup>5</sup> Աշխարհաբար թարգմանությունը քաղված է հետևյալ հոդվածից՝ Լ. Տ եր - Պ ե տ - ր ո ս յ ա ն, Եվսեբիոս Եմեսացու Ութամատյանի մեկնությունը և թարգմանություն տեսությունը V դարի հայ մատենագրության մեջ. - ՊԲՀ, 1982, N 4, էջ 65-66:

<sup>6</sup> Ն. Ակինյանի բնորոշմամբ՝ «արծաթի գարի» (Ն. Ա կ ի ն ե ա ն, Դասական Հայերէնը և Վիեննական Միթարեան դպրոցը, Վիեննա, 1932), ըստ Հր. Աճառյանի «Հետմետրոյան» շրջանի (Հր. Ա ճ ա ո յ ա ն, Հայոց լեզվի պատմություն, մ. II, Երևան, 1951, էջ 78-93, 107-113) թարգմանություններն են: «Նախահունարան» ("pre-hellenophile") եզրն առաջին անգամ կիրառել են Գ. Լաֆոնտենը և Բ. Կուլին Գրիգոր Նազիանզացու թարգմանությունների վերաբերյալ. տե՛ս Guy Lafontaine, Bernard Coulie. *La version arménienne des discours de Grégoire de Nazianze, tradition manuscrite et histoire du texte* (Corpus Scriptorum Christianorum Orientalium 446, Subsidia 6/7), Louvain, 1983, p. 137. Գ. Ուլունոյանը դրանց շարքին է դասել Բարսեղ Կեսարացու «Հարցողաց գիրքը». տե՛ս Basilio di Cesarea, *Il libro delle Domande*, edito da Gabriella Uluhogian (Corpus Scriptorum Christianorum Orientalium, 536 - Scriptores Armeniaci 19), Louvain, 1993, pp. IX-XXI: Վ. Կալցուրիի կարծիքով, նման բնույթի է Աթանասի ճառերից մեկը. տե՛ս V. Calzolari, *La version Armenienne du dialogue d'Athanase et du Pseudo-Athanase d'Alexandrie. Analyse linguistique et comparaison avec l'original grec, Le Museon*, t. 113, 2000, fasc. 1-2, p. 125-147. Որպես այդպիսին է բնորոշվել և «Ալեքսանդրի պատմությունը». տե՛ս S. Mancini Lombardi, G. Uluhogian, *Due redazioni per il Romanzo di Alessandro armeno: tessere di un mosaico perduto?, La diffusione dell'eredità classica nell'età tardoantica e medievale. Il "Romanzo di Alessandro e altri scritti, Atti del Seminario internazionale di studio* (Roma-Napoli, 25-27 settembre 1997), a cura di Rosa Bianca Finazzi e Alfredo Valvo, Edizioni dell'Orso, p. 157-174. Նախահունարան թարգմանությունների մասին տե՛ս մանրամասն G. Muradyan. *Pre-hellenizing Translations, Bnagirk' Yisatakac', Documenta memoriae, Dall'Italia e dall'Armenia, Studi in onore di Gabriella Uluhogian*, Bologna, 2004, pp. 297-315. Մենք այդ շարքին ենք ավելացրել «Կանոնագիրք Հայոց»-ի «Երկրորդ առաքելական (Կղեմայ)», Կոստանդնուպոլսի և Եփեսոսի ժողովների կանոնները: Մեր համոզմամբ, դասական համարվող թարգմանությունների մանրակրկիտ ուսումնասիրությունը ստիպելու է այլ բնագրեր ևս դասելու նախահունարան թարգմանությունների ցուցակին:

<sup>7</sup> Հունարան թարգմանությունների լեզվական առանձնահատկությունների առավել համապարփակ քննություններ են՝ Յ. Մ ա ն ա ն դ ե ա ն, Յունարան դպրոցը և նրա զարգացման շրջանները, Վիեննա, 1928, Հր. Ա ճ ա ո յ ա ն, Նշվ. աշխ., էջ 142-168, Գ. Ջ ա հ ու կ յ ա ն, Հունարան դպրոցի Հայերենը և նրա մշակած նախածանցների

Նման զարգացում մատնանշում է Ս. Բրոքը Հունարենից ասորերեն թարգմանություններում. եթե չորրորդ-հինգերորդ դարերի թարգմանիչների նպատակն էր հունարեն երկը հասկանալի լեզվով մատուցել ասորի ընթերցողին, ապա նրանց հետնորդները վեցերորդ-յոթներորդ դարերում ձգտում էին ընթերցողին հասցնել թարգմանվող երկի ընկալմանը, ինչը հանգեցրել է ասորերենի նորմերին հակասող՝ արհեստական բառերի և քերականական ձևերի կերտմանը<sup>8</sup>:

Տիպաբանորեն նույնպիսի զարգացում են ունեցել նաև Հունարենից սլավոններեն թարգմանությունները: Այսպես, Կիրիլ-Մեթոդիի ժամանակաշրջանի թարգմանությունները բնորոշվում են թարգմանվող բառերի ու հասկացությունների ներքին իմաստի բացահայտումով, ինչը հաճախ բերում էր սկզբնազրից արտաքին, ձևական շեղման: Հետագայում այդ մեթոդի կիրառման տեսակարար կշիռը նվազեց՝ տեղի տալով սովորական բառերը տերմինաբանական արժեքով օժտելուն և բառապատճենմանը: Նույնիսկ իմաստավորման եղանակով ստեղծված որոշ հին եզրեր փոխարինվում էին նոր՝ պատճենված բառերով, ինչը հանգեցնում էր տառակերտության և իմաստի մթազնման<sup>9</sup>: Ուրեմն, ամենավաղ՝ «ոսկեգարյան» կամ դասական շրջանի թարգմանությունները համեմատաբար ազատ են Հունարենի ազդեցությունից<sup>10</sup>, սակայն, ինչպես կտեսնենք ստորև, գրանցում էլ երբեմն հանդիպում են Հունարենի օրինակով կերտված բառերի և շարահյուսական կառույցների առանձին օրինակներ:

Հետազոտողները բազմիցս նշել են Աստվածաշնչի թարգմանության դասական ընդլայնումը, որով պայմանավորված Հունարենի լեզվական ազդե-

Համակարգը. — ՊԲՀ, 1993, N 1-2, էջ 7-14, С h. M e r c i e r, L' école hellénistique dans la littérature arménienne, REArm, t. XIII, 1978, pp. 59-75. Գոյություն ունեն և առանձին թարգմանությունների նվիրված ուսումնասիրություններ: Տե՛ս նաև զանազան թարգմանությունների մի քանի առանձնահատկությունների նվիրված մեր հոդվածը՝ G. M u r a d y a n. "Notes on Some Linguistic Characteristics of the Hellenizing Translations", Le Museon, t. 112, fasc. 1-2, 1999, pp. 65-71.

<sup>8</sup> S. B r o c k. "Greek into Syriac and Syriac into Greek". — In: S. B r o c k. *Syriac Perspectives on Late Antiquity*, Aldershot, Burlington USA, Singapore, Sydney, 2001, pp. 422-406; i d e m, "Aspects of Translation Technique in Antiquity", *ibid.*, p. 73; i d e m, "Towards a History of Syriac Translation Technique". — *Orientalia Christiana Analecta*", 221, 1983, p. 4. Այդպիսի զարգացումը Բրոքը կապում է ժամանակի ընթացքում հունարենի կարևորության և վարկանիշի բարձրացման հետ:

<sup>9</sup> E. M. B e p e щ a г и н. У истоков славянской философской терминологии: ментализация как прием терминотворчества. — "Вопросы языкознания", 1982, N 6, с. 105-114. Բառիմաստի մեջ դիտելով ինչպես «հասկացության» (понятийная доля), այնպես էլ «ոչ հասկացության»՝ հարակից իմաստային բաժիններ (непонятийная доля - лексический фон) (էջ 110)՝ «իմաստավորում» (ментализация) եզրը հեղինակը բացատրում է որպես անցում առաջին մակարդակից երկրորդ՝ ավելի բարդ մակարդակին, և բնորոշում այն որպես թարգմանական արվեստի արտահայտություն (էջ 112): Տերմինաստեղծման՝ հետագայում ավելի տարածված մեթոդներ դարձան փոխառությունը, բառապատճենումը և սովորական բառերը տերմինաբանական իմաստով օժտելը (ТРАНС-ПОЗИЦИЯ բառային միավորի տեղափոխումը համընդհանուր լեզվից խմբային լեզու). դրանք արդեն ոչ թե թարգմանական արվեստի, այլ տեխնիկայի տարրեր են (էջ 111):

<sup>10</sup> Այդ իրողությունը հատկապես ցայտուն երևում է խիստ հունաբան թարգմանության՝ Տիմոթեոս Կուզի «Հակաճառություն» մեջ Աստվածաշնչից մեջբերումների և Աստվածաշնչի կանոնական բնագրում այդ նույն հատվածների համեմատությունից. տե՛ս Գ. Մ ու լ ր ա գ ե հ ա ն, Դասական և յուրաքանչյուր թարգմանությունների բաղդատությունները. — «Հանգէս ամսօրեայ», 1999, էջ 187-216:

ցուծյունը նվազագույն է եղել:

Մ. Կոզյանը որպես «խիստ հայկաբան» է որակել Մակաբայեցիների երկրորդ գրքի հայերեն թարգմանությունը<sup>11</sup>. այդ հանգամանքը, ինչպես և թարգմանության սխալները, նա բացատրում է «անկատար հունագիտությունով», և այն անվանում «աղատ թարգմանություն»<sup>12</sup>: Կոզյանն իր գրքում բերում է նկարագրական թարգմանության բազմաթիվ օրինակներ՝ առանձնացնելով դրանց թվում «կրկին» թարգմանությունները, որոնք հավանաբար լուսանցքից հետագայում թափանցել են տեքստի մեջ, իսկ պատճառն այն է, որ թարգմանիչը հաճախ չի կարողացել հունարեն բառի զանազան իմաստներից ընտրել «հարմարագույնը» և միանգամից բոլորն է նշել, կամ էլ, առաջին թարգմանությունից գոգոհ, կցել է մի երկրորդը<sup>13</sup>: Բոլոր անուղղակի խոսքերն ուղղակիի են վերածված<sup>14</sup>:

Գ. Կյուանդեն «Ճշգրտությունը և հնարամտությունն Աստվածաշնչի հայերեն թարգմանության մեջ» հոդվածում<sup>15</sup> նշում է, թե թարգմանիչներն ավելի շատ հարգել են իմաստը, քան ձևը՝ նախապատվությունը տալով բնադրի ոգուն և ոչ տառին: Իր այդ կարծիքը նա ամրապնդում է հետևյալ փաստերով. հունարեն բազմիմաստ բառերը թարգմանվել են կոնտեքստից ելնելով (σπέρμα – «սերմն», «զաւակ», ἄσθενής – «հիւանդ», «սղար», πᾶις – «մանուկ», «մանկտի», «ծառայ», «որդի», μονογενής – «ըուստր միածին» (խոսքը մարդու մասին է՝ Ղկ. է 12) և «որդի միածին» (Աստծո մասին է՝ Յովհ. Ա 14), πνεῦμα – «հոգմ», «այս», «հոգի» կամ «ոգի»), հունարեն կոյնեին հատուկ համեմատությունների կիրառումը մասի παρά և ὑπέρ նախդիրները (դասական ἦ – «քան» շաղկապի փոխարեն) միշտ թարգմանվել են հայերենի համար կանոնավոր «քան»-ով, մինչդեռ լատիներեն Վուլգատայում կան տառացի թարգմանության դեպքեր, հունարեն հոդի և գոյականի միջև ներմուծված մակբայը թարգմանելիս բառերը տեղափոխվել են ἄπελθόντες εἰς τοὺς κύκλω ἀγροῦς – «երթեալ շուրջ յազարակս» (Մկ Զ 36), կամ մակբայը փոխարինվել է ածականով εἰς τὰς ἕξω πόλεις – «յարտաքին քաղաքսն» (Գծ ԻԶ 11), հունարեն հոգը փոխարինվել է հարաբերական գերանվամբ ἄγοισιν αὐτὸν πρὸς τοὺς φαρισαιοῦς, τὸν ποτε τυφλόν – «ածէին առ փարիսեցիսն զնա, որ երբեմն կոյր էր» (Յովհ. Թ 13): Դերբայի դիմաց գիմավոր բայ օգտագործելիս հայ թարգմանիչները որոշակի պատկերացում էին տալիս գեպքերի ժամանակային հաջորդականության մասին, մինչդեռ հունարենում այն այգքան

<sup>11</sup> Մ. Կոզյան, Մակաբայեցուց Բ գրքին հայերեն թարգմանությունը, Վիեննա, 1923, էջ 74. ըստ հեղինակի՝ թարգմանությունն իրականացվել է 432 (եփեսոսի ժողովից հետո) և 450 թվականների միջև, քանի որ այն հիշատակում է եղիշեն (նույն տեղում, էջ 15):

<sup>12</sup> Նույն տեղում, էջ 75:

<sup>13</sup> Նույն տեղում, էջ 8. այդպիսի 21 դեպք տե՛ս էջ 9-14. Հմմտ., օրինակ, «ըկուուս քանգակեալս, պատկերս կերպարանեալս» – ἀγάλματα (Բ 2), որն Աստվածաշնչի մեկ այլ հատվածում (Եսթ. ԺԹ 9) թարգմանված է «պատկեր», «գյալտնութեան վճիռն» – τὸ διεγνώσμενον (Գ 23), «խոստովան լինէին և փառաւորէին» – ἐξομολογοῦμενοι (Ը 27), «ըրամաժողով ի վարձս» – ἀργυρολόγητον (ԺԱ 3, «գրամաժողով»-ը հունարեն բառի պատճենումն է):

<sup>14</sup> Նույն տեղում, էջ 77:

<sup>15</sup> G. C u e n d e t. Exactitude et adresse dans la version armenienne de la Bible.– «Հանդէս Ամսօրեայ», 1935, էջ 563-570:

ականհայտ չէ πληγὰς ἐπιθέντες ἀπὸ ἄλλων ἀφέντες ἡμιθαιπὶ – «վէրս ի վերայ եգին, թողին կիսամահ և գնացին» (Ղկ. Ժ 30):

Հունարեն Ավետարաններում և դրանց գոթերեն, հայերեն ու հին սլավոններեն թարգմանություններում շարադասությունը նվիրված իր հետադատության մեջ՝ նույն հեղինակը կոնկրետ օրինակներով ցույց է տվել, թե ինչպես այս կամ այն տիպի բառակապակցություններում հունարենի շարադասությունը հետևելը կամ չհետևելը պայմանավորված է զուտ հայերենի ներքին տրամաբանությամբ:

Ակարդիլիին<sup>17</sup> խոսում է Ավետարանների թարգմանիչների՝ բնագրին հարադատ մնալու ճիգերի և մյուս կողմից՝ գրան հասնելու լեզվական դժվարությունների մասին, ինչը բերում էր հունարեն սկզբնագրից որոշակի տարբերությունների: Դրանք պայմանավորված էին կամ ներքին դժվարություններով, կամ տեքստը մեկնաբանելու միտումով, երբեմն էլ հայերենի հնարավորություններն աշխուժացնելու ձգտումով<sup>18</sup>: Ակարդիլիին ուշադրություն է դարձնում թարգմանության բազմազանություն՝ միևնույն բառերը, քերականական դարձվածներն ու արտահայտությունները տարբեր եզրանակներով թարգմանելու վրա. օրինակ հունարեն ἄρτος բառի համար օգտագործվել են «հաց» (Մթ. Դ 4) և «նկանակ» (Մթ. ԺԵ 34) համարժեքները, կամ հմտ. τί πρὸς σέ – «քեզ զի փոյթ է» (Յովհ. ԻԱ 22): Իսկ τὰ τῶν δαιμονιζομένων – «զիրս դիւահարացն» (Մթ. Ը 33) մեկնողական թարգմանությունը<sup>19</sup> զուգահեռ առկա է նման մի արտահայտությունից՝ ավելի բառացի թարգմանությունը՝ οὐ φρονεῖς τὰ τοῦ θεοῦ ἀλλὰ τὰ τῶν ἀνθρώπων – «ոչ խորհիս դաստոծոյսն, այլ զմարդկան» (Մթ. ԺԶ 23):

«Երկրորդումն Օրինաց» գրքի հրատարակությունը կից իր ուսումնասիրությունից մեջ Կլոդ Կոքսը մի գլուխ է նվիրել թարգմանչի մեթոդի նկարագրությունը<sup>20</sup>: Թարգմանությունը դասական է՝ դերբայների դիմաց հաճախ գիմավոր բայեր են (հատկապես λέγω – «ասելով» – «(և) ասէ»), իսկ որոշիչ առումով կիրառվող դերբայների դիմաց՝ հարաբերական նախադասություններ, հունարեն ներկա ժամանակով հանդես եկող բայերն ըստ իմաստի երբեմն թարգմանվում են ապառնիով, թարգմանիչը սիրում է ավելացնել դերանուններով արտահայտված ենթականեր, ազատորեն ներմուծում կամ բաց է թողնում «և» շղկապը, «ահա», «արդ», «այլ», «իսկ», «զի», «աւադիկ», «երբեմն» «մասնիկները», ազատորեն փոխում բառերի դասավորությունը: Կոքսը նշում է նաև մեկնողաբար թարգմաննե-

<sup>16</sup> G. C u e n d e t, *L'ordre des mots dans le texte grec et dans les versions gotique, arménienne et vieu slave des Evangiles*, Paris, 1929. Կյուանդեի գրքի «հայապատկան մասերու ամփոփումը տե՛ս Ա. Վ ա ռ դ ա ն ե ա ն, Աւետարաններու յոյն բնագրին և հայ թարգմանութեան բառակարգը. – ՀԱ, 1929, էջ 321-329, 449-457, 583-592, 1931, էջ 1-8:

<sup>17</sup> P. G. S c a r d i g l i, Per un valutazione linguistica della versione armena dei Vangeli, *Accademia Nazionale dei Lincei, Rendiconti della Classe di Scienze morali, storiche e filologiche*, Serie VIII, vol. XIV, fasc. 7-12, 1959, pp. 370-387.

<sup>18</sup> Նույն տեղում, էջ 378.

<sup>19</sup> Հունարեն հոդը (τῶ) գոյականացրել է սեռական հոլովով բառը. «զիրս» գոյականը գրա ոչ բառացի, մեկնողական թարգմանությունն է:

<sup>20</sup> C. C o x, *The Armenian Version of Deuteronomy* (University of Pennsylvania Armenian Texts and Studies 2), 1981, pp. 223-241: "Characteristic of the translator".

լու հետաքրքրական դեպքեր (օրինակ՝ οὗτος καταφείζεται – «փախիցէ նա և անկցի» (ԺԹ 5), προσπορεύεσθε – «նստեալ պաշարեսցէ» (Ի 3), θάλλπη – «ջեռեալ նստիցի» (ԻԲ 6), βιασάμενος – «բռնաբար» (ԻԲ 25), περικαθαριει – «պարուրեսցէ» (Լ 6)) և այն փաստը, որ թարգմանիչը խիստ համարժեքների չի դիմում և բազմազանեցնում է իր բառապաշարը (είπον – «ասեմ», «խօսիմ», «խոստանամ», ἀφανίζω – «եղծանեմ», «բառնամ», «սատակեմ», ἰμάτιον – «հանդերձ», «ձորձ»), կամ ընդհակառակը՝ տարբեր բառեր թարգմանում է միևնույն բառով («անկանիմ» – παραπορεύεσθαι, διαπίπτω, «հանճար» – σύνεσις, «հանճարեղ» – ἐπιστήμω), ածականի դիմաց էլ հաճախ օգտագործում է համապատասխան գոյականը սեռական հոլովով:

Պ. Քաուլին մի մեծ հոգոված է նվիրել Մնացորդաց գրքի երկու թարգմանությունների բաղադատությունը<sup>21</sup>: Վիճարկելով նախորդ հետազոտողների կարծիքն այն մասին, թե Զոհրայանի Աստվածաշնչում տեղ գտած տարբերակից զանազանվող՝ Գր. Նալաթյանցի հրատարակած տեքստը թարգմանված է ասորերենից<sup>22</sup>, Քաուլին ապացուցում է, որ թարգմանությունը կատարված է հունարեն բնագրից, սակայն թարգմանչական մեթոդի ավելի վաղ փուլ է ներկայացնում: Եթե կանոնական Աստվածաշնչի մեջ մտածը ճշգրիտ ու հարազատ թարգմանություն է<sup>23</sup>, ապա այս վաղ թարգմանությունը հատուկ են մեկնաբանություն տարրեր<sup>24</sup>, դրանում նկատվում է զուգահեռ հատվածների փոխադրեցություն<sup>25</sup>, առկա են մեկ բառը երկու բառով թարգմանելու դեպքեր<sup>26</sup>, թարգմանիչը խուսափում է նպատակի պարագա անորոշ դերբայ կիրառելուց<sup>27</sup>, կանոնական թարգմանության հոդի դիմաց հաճախ օգտագործում է տեղի մակբայ<sup>28</sup>, անձնական դերանուն է ներմուծում այնտեղ, որտեղ հունարենի և մյուս թարգմանություն մեջ ենթական արտահայտված չէ, ներմուծում է «ինչ» անորոշ դերանունը և դիմում ոչ բառացի թարգմանություն այլ հնարքների<sup>29</sup>: Երկրների անուն-

<sup>21</sup> P. C o w e. The Two Armenian Versions of the Chronicles. Their Origin and Translation Technique, — *REArm*, t. XXII, 1990-91, pp. 53-93.

<sup>22</sup> Գր. Նալաթյանց, Գիրք Մնացորդաց ըստ Հնագոյն Հայ թարգմանութեան, Մոսկուա, 1899: Այդ տեսակետի կողմնակիցն էր նաև Մառը. տե՛ս Н. М а р р. Новоткрытый армянский текст Паралипоменон. — В кн.: "Кавказский культурный мир и Армения", составитель П. М. Мурадян, Ереван, 1995, с. 179-196.

<sup>23</sup> Նույն տեղում, էջ 62, հմմտ. նաև էջ 92: Այս թարգմանություն մեջ կան հունարենից պատճենված նոր բառեր. այդ առիթով Քաուլին գրում է, որ բառապատճենման սկզբունքի որդեգրումը հեշտացրեց հետագայում նախածանցավոր բառերի և այլ հունարեն կազմությունների կերտումը:

<sup>24</sup> Նույն տեղում, էջ 73:

<sup>25</sup> Նույն տեղում, էջ 74:

<sup>26</sup> Նույն տեղում, էջ 78. «ուղղեցաւ և աղողեցաւ սպաս պաշտաման» — κατορθώθη ἡ λειτουργία (Լե 10), «զաւրացոյց զնոսա և հաստատեաց» — κατήχυσεν αὐτούς (Լե 2), «ըստ պատուիրանի հրամանի արքային» — κατὰ τὴν ἐντολὴν τοῦ βασιλέως (Լե 16):

<sup>27</sup> Նույն տեղում, էջ 86 «(և յղեցին) աւետաւոր» (մյուս թարգմանություն մեջ՝ «աւետարանել») — του εὐαγγελισασθαι (Ժ 9):

<sup>28</sup> Նույն տեղում, էջ 87-88 «ի վաղիւ անգր», կանոնական թարգմանություն մեջ «ի վաղիւն» (Ժ 7):

<sup>29</sup> Նույն տեղում, էջ 88, օրինակ՝ «որ գրեալ է» — τοὺς γεγραμμένους (Լե 19, կանոնական թարգմանություն մեջ բառացի է՝ «զգրեալն»):

ների փոխարեն նա հաճախ օգտագործում է բնակիչների անունը՝ սեռական հոլովով<sup>30</sup>:

Ցույց տալով նաև, որ խնդրո առարկա թարգմանություն մեջ կան արտահայտություններ, որոնք կարելի է գտնել վաղ շրջանի հայ հեղինակների երկերում<sup>31</sup>, Քառուին այն բնորոշում է որպես բնիկ հայկական բառօգտագործման առավել վստահելի «վկա»<sup>32</sup>, որպես վերապատում, որը հիշեցնում է Փավստոս Բուզանդի ոճը<sup>33</sup> և ունի գուսանների արվեստում կիրառվող պատրաստի բանաձևեր<sup>34</sup>: Կանոնական թարգմանություն առիթով Քառուին գրում է, որ թարգմանիչների նոր սերունդն ավելի տառացիություն կողմնակից էր, քան նախորդները: Կոստանդնուպոլսում և այլ կենտրոններում հունարեն սովորած լինելով՝ նրանք ավելի հակված էին քերականական կատեգորիաների ձևական ընդօրինակմանը: Նրանք պատրաստ էին հեռանալ սովորական հայերեն խոսքից՝ մոտեցնելով այն հունարենին<sup>35</sup>: Ճիշտ է, երկրորդ թարգմանությունն էլ, հունարենին հարազատ լինելով հանգերձ, նման չէ ստրկականի: գրանում նույն բառերը, կոնտեքստի թելադրանքով, ստացել են տարբեր համարժեքներ (οἶκος – «տուն», «տաճար», ἰσθάναι – «կացուցանել», «հաստատել»)<sup>36</sup>, կամ ընդհակառակը, տարբեր հունարեն բառեր կարող են թարգմանվել միևնույն բառով (ἠγέρθησαν – «յարեան» և ἀνέστη – «յարեալ», κατὰ τὴν κρίσιν – «ըստ օրինին» և τοῦ νόμου – «օրինացն», προσάγειν, ἀναφέρειν, ἐνεργεῖν – «մատուցանել»), իսկ հունարեն եղակի բայը, որը համաձայնեցված է համազոր ենթականերից առաջինի հետ, կարող է թարգմանվել հոգնակի բայով՝ ἀπέθανεν Σαούλ καὶ οἱ υἱοὶ αὐτοῦ – «մեռան Սաուլը և որդիքն նորա» (Ժ 2)<sup>37</sup>:

Մ. Զինբաչյանը, «Դասական հայերենի թարգմանության եղանակները Ծննդոց գրքում»<sup>38</sup> մենագրության մեջ, ասորերենի հետքերը Ծննդոց գրքում ցույց տալուց հետո<sup>39</sup>, մանրամասն ուսումնասիրել է գրա հարաբերությունները հունարեն բնագրի հետ: Հատկապես հունարեն տարբեր շարահյուսական կառույցների և քերականական ու ոճական առանձնահատկությունների արտահայտումները հայերենում: Զինբաչյանի ձեռնարկած բաղդատությունը ծանոթանալիս՝ ընթերցողը համոզվում է, որ թարգմանիչը ձգտել է արտացոլել նախադասությունների ոչ թե արտաքին ձևը, այլ ներքին իմաստը, ինչը բերել է թարգմանության բազմազանությունը: Ամ-

<sup>30</sup> Նույն տեղում, էջ 88, օրինակ՝ «արքայն եգիպտացւոռ» – βασιλεὺς Αἰγύπτου (ԺԵ 19, կանոնական թարգմանության մեջ «արքայ եգիպտոսի»), հմմտ. նույն երևույթը Մակաբայցիների երկրորդ գրքում՝ Ս. Կ ո գ ե ա ն, նշվ. աշխ., էջ 76:

<sup>31</sup> Նույն տեղում, էջ 86:

<sup>32</sup> Նույն տեղում, էջ 87:

<sup>33</sup> Նույն տեղում, էջ 88:

<sup>34</sup> Նույն տեղում, էջ 89:

<sup>35</sup> Նույն տեղում, էջ 91:

<sup>36</sup> Նույն տեղում, էջ 60:

<sup>37</sup> Նույն տեղում, էջ 61:

<sup>38</sup> M. M. J i n b a c h i a n, *Les techniques de traduction dans la Genèse en arménienne classique*, Lisbonne, 1998 (Հայկական մատենաշար Գալուստ Կիւլպէնկեան հիմնարկութեան):

<sup>39</sup> Նույն տեղում, էջ 32-74:

փոփելով՝ հեղինակը նշում է<sup>40</sup>, որ տարբեր մասնիկների, դերանունների ու մակբայների օգնությամբ հայերենը ճշգրտում է մտցնում, ինչը բացակայում է հունարենում և ասորերենում: Հաճախ բնագրի համադասությունը փոխարինված է ստորադասություն, իսկ մասնիկներն ու դերանունները նպատակ ունեն ցույց տալու նախադասությունների տրամաբանական փոխհարաբերությունները: Ժամանակային հարաբերություններն ավելի բացահայտ են դարձել, ինչը նպաստում է հստակեցնելու, թե ով ինչ է արել, երբ և որտեղ: Թարգմանությունը վկայում է նաև բառերի բազմիմաստությունը քաջատեղյակ լինելու մասին. մեկ բառը թարգմանվում է մեկից ավելի համարժեքներով՝ միապաղաղությունից խուսափելու, նաև բառի տարբեր իմաստները տարբերակելու համար: Մյուս կողմից միևնույն հայերեն բառը կարող է հանդես գալ հունարեն տարբեր բառերի դիմաց:

Բաղդաստություն արդյունքներից առավել հետաքրքրական են հունարեն հատուկ շարահյուսական դարձվածների հայերեն արտահայտումները: Այսպես, ἔως + անորոշ դերբայ դարձվածը<sup>41</sup> թարգմանվել է ավելի բառացի եղանակով՝ «մինչ(չ)և (ց)» + անորոշ դերբայ՝ καὶ ἔσειθων οὐχ ὑπέστρεψεν ἕως τοῦ ξηραίνῃναι τὸ ὕδωρ ἀπὸ τῆς γῆς – «և ել և անդրէն ոչ դարձաւ մինչև ցցամաքել ջրոյն յերկրէ» (Ը 7)<sup>42</sup>, և ավելի ազատ՝ շաղկապին հետևող՝ ստորադասական եղանակի դիմավոր բայով՝ ἐν ἰδρωτί τοῦ προσώπου σου φάγη τὸν ἄρτον σου ἕως τοῦ ἀποστρέψαι σε εἰς τὴν γῆν – «քրտամբք երեսաց քոյ կերիցես զհաց քո, մինչև դարձցիս յերկիր» (Գ 19)<sup>43</sup>. ἐν τῷ ἀκουσαι (ԼԸ 15, ԻԴ 52) և ἐν τῷ ἰδεῖν (ԽԴ 31) տիպի արտահայտությունները՝ թարգմանված են ժամանակի պարագա երկրորդական նախադասություններով՝ «իբրև լուաւ թէ», «իբրև ոչ տեսանիցէ»:

Հունարեն Ծննդոց գրքում հանդիպում է «բացարձակ սեռական» դարձվածի տասն օրինակ. յոթը թարգմանված են ժամանակի (հինգը՝ «մինչդեռ/մինչ», երկուսը՝ «իբրև» շաղկապով), երկուսը՝ պայմանի («եթէ» շաղկապով) պարագա երկրորդական նախադասություններով, մնացածների թարգմանությունը շատ ճշգրիտ չէ:

Գ. Սարգսյանը, քննելով Աստվածաշնչում հունարեն κῶμη և ἀγρός

<sup>40</sup> Նույն տեղում, էջ 302-303:

<sup>41</sup> Այն ավելի ճիշտ կլինեք բնորոշել որպես ἕως նախդիր, որին հետևում է անորոշ դերբայի սեռական հոլովը, այսինքն՝ անորոշ դերբայը սեռական հոլովով հանգես եկող հոդով. այդ անորոշ դերբայն էլ կարող է ունենալ հայցական հոլովով ենթակա, որը թարգմանության մեջ արտահայտվում է սեռական հոլովով: Հմմտ. ἕως τοῦ εἰσελθῆναι αὐτόν – «մինչև ի գալ նորա» (Գծ. Ը 40). հետևաբար, այս բառացի թարգմանության մեջ էլ առկա է ոչ բառացիության տարր:

<sup>42</sup> Նույն տեղում, էջ 184-185, Հմմտ. նաև ԼԳ 3:

<sup>43</sup> Նույն տեղում, Հմմտ. նաև ԺԸ 22, ԻԴ 11, ԻԷ 44, ԻԸ 15, ԼԳ 14, ԼԴ 5, ԼԸ 17, ԼԹ 16, ԽԱ 49, ԽԲ 16, ԽԴ 12, ԽԹ 10, ԽԳ 25, ԽԸ 8 (ընդամենը 14 դեպք):

<sup>44</sup> ἐν նախդիրն է՝ տրական հոլովով հանդես եկող հոդի հետ, որը գոյականացնում է անորոշ դերբայը. Հմմտ. ἐν τῷ κατηγορευθῆναι αὐτόν – «ի չարախօսելն նորա» (Մթ. ԻԷ 12 «չարախօսելն» կրավորական իմաստով է, ինչպես և հունարենում), ἐν τῷ εἰσελθῆναι αὐτούς εἰς τὴν νεφέλην – «ի մտանելն նոցա ընդ ամպովն» (ՂԿ. Թ 34), ἐν τῷ ἐπαίρῃσθαι με – «ի միւսանգամ գայտեան իմում» (ՂԿ. Ժ 35), ἐν τῷ τὴν χεῖρα ἐκτείνειν σε – «ի ձգել զձեռն քո» (Գծ. Դ 30), ἐν τῷ κρῖνεσθαι σε – «ի դատել քեզ» (Հռ. Գ 4):



բառերի տարբեր թարգմանությունները, եկել է այն համոզման, որ դրանք մեխանիկական չեն, այլ համապատասխանում են կոնտեքստից բխող իմաստին<sup>45</sup>:

Հր. Բարթիկյանը, բաղդատելով Մատթեոսի Ավետարանը հունարեն սկզբնագրի հետ, նկատել է հունարեն միևնույն բառը տարբեր բառերով և հունարեն հոմանիշները հայերեն միևնույն բառով թարգմանելու դեպքեր (ինչի հիման վրա նա ենթադրում է, որ թարգմանիչների ձեռքին բառարան չի եղել), ազատ թարգմանության, հունարենի քերականության առանձնահատկությունները հայերենի քերականական միջոցներով արտացոլելու օրինակներ<sup>46</sup>:

Մեր ուսումնասիրած դասական շրջանում կատարված թարգմանություններից է դանազան իրական ու առասպելական կենդանիների վարք ու բարքին նվիրված «Բարոյախօս» ժողովածուն (հունարեն *Physiologus*<sup>47</sup>), որի լեզվական առանձնահատկությունները հետևյալն են՝

ա) Բոլոր նախածանցավոր բառերը թարգմանված են ոչ տառացիորեն՝ հունարեն բառի կառուցվածքը չարտացոլող բառով, օրինակ՝ ἀντικείμενος – «հակառակորդ» (3.8, 5.6, 16.9, 17.7, 20.13, 31.8) կամ բառակապակցություն՝ օրինակ, συμπλέκεται – «շաղեալ կայ» (3.6), καταβάλλει – «արկան է ի խոնարհ» (17.4):

բ) Տասներեք բարդ բառ թարգմանված է բառացիորեն, օրինակ՝ σαρκόφαγος – «գիշակեր» (23.3), λεπτοκλόνος – «մանրոստ» (3.5), որոնց դիմաց արձանագրել ենք նկարագրական թարգմանության տասնվեց դեպք՝ պարզ բառով կամ բառակապակցություն՝ σῶφρων – «ցած» (21.8), εὐῶδια – «Հոտ անոյշ» (19.8), ἐτεροδόξων – «աւտարաւտի ուսմանց» (15.15):

դ) Նկարագրական թարգմանության այլ արտահայտումներ են հունարեն «ունենալ» բայի դիմաց սեռական կամ տրական Հոլովի<sup>48</sup> հետ էա-

<sup>45</sup> Գ. Մ ա Ր Գ Ս Յ ա ն, նշվ. աշխ., էջ 28:

<sup>46</sup> Հր. Բ ար Թ ի կ յ ա ն, Մատթեոսի ավետարանը հունարենի և հայերենի բաղդատություններ, Աճեմյան մատենաշար, Ա, Երևան, 2002, էջ 15-36:

<sup>47</sup> Նշում ենք պարբերությունները՝ ըստ մեր պատրաստած երկլեզվյան Հրատարակության՝ Physiologus, the Greek and Armenian Versions, with a Study of Translation technique (Hebrew University Armenian Studies ծ) (Հրատարակության մեջ է). տե՛ս նաև Н. М а р р. Физиолог, армяно-грузинский извод (Тексты и разыскания по армяно-грузинской филологии, кн. VI), СПб., 1904 (այդ Հրատարակության հիմքում ընկած ձեռագիրը՝ Մատենադարանի N 2101, արտացոլում է հայերեն տեքստի հնագույն վիճակը: Այն հիմք ենք ընդունել նաև մենք՝ այն տարբերությունները, որ օգտագործելով այլ ձեռագրերի ընդհանուր տարրերը, աշխատել ենք տեքստը հնարավորինս համապատասխանեցնել հունարեն նախօրինակին) և A. K a r n e j e v. Der Physiologus der Moskauer Synodalbibliothek. Ein Beitrag zur Lösung der Frage des armenischen und eines alten lateinischen Physiologus, Byzantinische Zeitschrift, III, 1894 (որը մեր պատրաստած Հրատարակության հիմքում ընկած և հունական առաջին խմբագրության չորրորդ խմբի ձեռագրերին մոտ, բայց և նրանցից զանազանվող, հայերեն թարգմանության հետ ամենից շատ համընկնող՝ 11-րդ դարում գրված մի ձեռագրի հրատարակումն է):

<sup>48</sup> Երկու Հոլովին էլ հատուկ է նման կիրառությունը, և, քանի որ դրանք համարյա միշտ համընկնում են ձևով (տարբերվում են «-ո» Հոլովման մի քանի գոյականների, ածականների և դերանունների եզակի թվում, անձնական դերանունների դեպքում՝ նաև հոգնակի թվում), ապա հնարավոր չի լինում մատնանշել, թե ինչ Հոլով ունենք տվյալ դեպքում. տե՛ս Մ. Մ ի ն ա ս ե ա ն, Դասական հայերենի նկարագրական քերականություն, Ժնև, 1996, էջ 235, § 581, էջ 238-239, § 590:

կան բայի կիրառությունը. (ὁ λέων) τρεις φύσεις ἔχει – «երեք բարք են առիժնու» (2.3), նաև οἱ ἄνω – «վերին զուարթունք» (2.9):

դ) Ինչպես նաև հետևյալ դեպքերը էպայետա – «բարի» փխ. «գովելի» (6.18), ψεκτά – «չար» փխ. «պարսուելի» (6.18), τοὺς πατέρας – «Հայրն եւ մայրն» (13.7), κατὰ κάρυον ἔστιν τὴν περιφέρειαν ἔχων – «ընդուզագարդ է բոլորակ» (22.4), λαμβάνεται ἡ θάλασσα ἐπὶ τῆν κόσμον – «ծովն աշխարհիս աւրինակ է» (5.5), πρόσωποι λαμβάνει του Σωτῆρος – «գաւրինակն բերէ կենարարին» (6.7, 10.10), οἱ τοιοῦτοι... πρόσωπον λαμβάνουσι – «այսպիսիքն... աւրինակ բերեն յինքեան» (16.9), φέρεται εἰς πρόσωπον τοῦ Σωτῆρος – «բերիցես աւրինակ Քրիստոսի» (6.15):

ե) Այս փոքրածավալ տեքստում տասնինն անգամ մեկ բառը թարգմանվել է երկու հոմանիշով, իսկ թարգմանություն վաղ լինելու ապացույց է ավելի ուշ թարգմանություններում սովորական դարձած ժողովրդի – «Փրկիչ», φύσις – «բնութիւն», փսիολόγος – «բնախաւս», σῶφρωι – «ողջախոհ» համարժեքների բացակայությունը: Դրանց փոխարեն ունենք ժողովրդի – «կենարար» (6.7, 8.3, 8.5, 13.7, 19.10, 28.6, 29.5, 32.4, 33.4, 34.4)<sup>49</sup>, ὁ Σωτήρ σου – «որ զքեզ պահէր» (2.5), սակայն երբեմն ժողովրդի թարգմանված է «փրկիչ» (1.7, 22.13, 29.4), մեկ անգամ ժողովրդի դիմաց գտնում ենք «փրկիչ» և «կենարար» (10.10) տարբերակները, բազմիցս ավանդված են φύσις – «բարք» (տե՛ս, սակայն, փսικόν – «բնական բարք» (20.7)), փսիολόγος – «բարոյախօս»<sup>50</sup> համարժեքները:

զ) Սույն տեքստում «Հայցականն անորոշ գերբայի հետ» թարգմանված է տրական հոլովով ենթակայի հետ անորոշ գերբայով, «բացարձակ սեռականը»՝ համադաս նախադասությունը և «ի» նախդրի հետ անորոշ գերբայով, որոշչի առումով հանդես եկող գերբայը քսանհինգ անգամ թարգմանված է Հարաբերական նախադասությունը և միայն հինգ անգամ՝ անցյալ գերբայով,<sup>51</sup> գոյականացված գերբայը երեք անգամ թարգմանված է գոյականով և մեկ անգամ Հարաբերական նախադասությունը, իսկ պարագայի առումով կիրառված գերբայը տասնութ անգամ թարգմանված է հիմնական բային համադաս դիմավոր բայական ձևով («ամբառնայ ղթևս և Հակառակի ընդ նաւս» – ἵψοῖ τὰς πτέρυγας... ἐρίζον τοῖς πλοίοις (5.2)), ութ անգամ՝ ժամանակի ու պատճառի երկրորդական նախադասություններով (օրինակ. «ի գոչիւն Հարկանի, քանզի գերծանել կամի» –

<sup>49</sup> Հմմտ. «աստուած կենարար» – ὁ θεός τοῦ σῶζειν (Սաղմ. 4է 21), «դաստուած կենարար իւրեանց» – του θεού του σώζοντος αὐτοῦς (Սաղմ. ձե 21): Մառը համարում էր այսպիսի թարգմանությունը ասորաբանություն, տե՛ս Н. М а р р. Физиолог, армяно-грузинский извод, с. XLII.

<sup>50</sup> Հմմտ. նույն համարժեքը մեկ այլ վաղ թարգմանության՝ Եվսեբիոսի Քրոնիկոնի մեջ՝ «բարոյախօսեալ» – πεψσιολογεῖσθαι, Եւսեբի Պամփիլեայ ժամանակականք երկամասնեայ (այսուհետ՝ Եւս. Քր.), աշխատասիրութեամբ Մ. Աւգերեանց, Վենետիկ, 1818, էջ 24. Համեմատել ենք այն հատվածները, որոնց հունարեն ղուգահեռները ներկայացված են Հրատարակչի կողմից:

<sup>51</sup> Նոր Կտակարանի՝ մեր ուսումնասիրած հատվածում (Մթ. Ա, Բ) որոշչի առումով կիրառված հունարեն գերբայի դիմաց մեկ անգամ հանդիպում է անցյալ գերբայ (Ա 24), սակայն ավանդված է Հարաբերական նախադասություն վեց գեպը (Ա 16, Ա 20, Բ 2, Բ 15, Բ 16, Բ 17):

κράζει βουλόμενον ἐκφυγεῖν (3.6)), և ոչ մի անգամ դերբայով<sup>52</sup>:

է) Միակ շարահյուսական հունաբանությունը հունարենն ὥστε + ἰν-  
 finitivus-ի բառացի թարգմանությունն է (ὥστε πρίζειν τὰ δένδρα –  
 «մինչեւ գծառս սղոցել» (3.3)), սակայն նույն դարձվածը երկու այլ դեպ-  
 քում թարգմանված է համադաս նախադասություններով (3.2, 17.7):

Պետք է նշել, որ «Բարոյախօս» ժողովածուի նախնական խմբագրու-  
 թյունը (այն ունի ևս երկու խմբագրություն, որոնցից մեկը ներկայացված է  
 երեք ենթախմբագրություններով) մեր համոզմամբ դասական շրջանի ա-  
 մենավաղ թարգմանություններից է, ինչը հաստատվում է Եզնիկ Կողբա-  
 ցու տեքստին ծանոթ լինելու հավանականությամբ, ինչպես նաև նրա մեջ  
 եղած տոմարական տվյալներով:

Մեր ուշադրությունը գրավել են նոր Կտակարանում հանդիպող հու-  
 նարենին հատուկ շարահյուսական դարձվածների ոչ բառացի թարգմա-  
 նություն դեպքերը: Այսպես, «բացարձակ սեռականների» մեծ մասը թարգ-  
 մանված է ոչ բառացի եղանակով, հիմնականում՝ ժամանակի սլարադա  
 երկրորդական նախադասություններով՝ «մինչդեռ նա զայս խօսէր ընդ նո-  
 սա» – ταῦτα αὐτοῦ λαλοῦντος αὐτοῖς (Մթ. Թ 12), հմտ. նաև Մթ. Ա 20,  
 ԻԴ 3, Մկ. ԺԳ 3, Ղկ. ԺԷ 12, ԻԹ 11, «և մինչդեռ այն ամենայն յարացեալ  
 կայցէ միախուռն» – οὕτω δὲ τῶν ὄλων συνεστηκότων (Եւս. քր. ա 24),  
 «մինչ էի անդրէն յերկրին իմում» – ὄντος μου ἐν τῇ γῆ μου (Յովն. Գ  
 2), «և իբրև սկսաւ առնուլ» – ἀρξαμένου δὲ αὐτοῦ συναίρειν (Մթ. ԺԸ  
 24), նաև Մթ. Բ 13, ԻԶ 6, ԻԷ 17, Ղկ. ԺԴ 29, Դ 42, Գծ. Ա 6, 9, «յորժամ  
 գայցէ և բախիցէ» – ἐλθόντος καὶ κρούσαντος (Ղկ. ԺԲ 36), կամ «ի»  
 նախդրով և սեռական ենթակայով անորոշ դերբայով՝ «յելանելն նորա» –  
 ἐκπορευομένου αὐτοῦ (Մկ. ԺԳ 1), նաև Մթ. Բ 19, Գծ. Ա 8, «ի մտանել ա-  
 րեղականն» – τοῦ ἡλίου δύναντος (Եւս. քր. ա 21)<sup>53</sup>:

Հունարենի շարահյուսությունը համար հատկանշական՝ հորի օգնությ-  
 յամբ գոյականացված անորոշ դերբայի (նախդրով կամ առանց նախդրի)  
 թարգմանություն մեր արձանագրած եղանակները հետևյալն են.

ա) համապատասխան նախդիրը և հայերեն անորոշ դերբայի՝ նախ-  
 դրով պահանջվող հոլովածու (սա ամենից ճշգրիտ թարգմանությունն է)՝  
 «վասն յայտնի լինելոյ» – ἐνεκεν τοῦ φανηρωθῆναι (Բ Կոր. Է 12), «ամե-  
 նայն որ հայի ի կին մարդ առ ի ցանկանալոյ նմա» – ὁ βλέπων γυναίκα  
 πρὸς τὸ ἐπιθυμῆσαι αὐτῆς (Մթ. Ե 28). Հունարեն հայցական հոլովով են-  
 թակայի թարգմանությունը սեռական հոլովով ենթակայով ընդգծում է ա-  
 նորոշ դերբայի գոյականացված լինելը՝ «վասն լինելոյ նորա» – διὰ τοῦ  
 εἶναι αὐτόν (Ղկ. Բ 4), «յետ յառնելոյ իմոյ» – μετὰ τὸ ἐγερθῆναι με

<sup>52</sup> Մթ. Ա, Բ գլուխներում պարաբայի առումով կիրառված դերբային չորս անգամ հա-  
 մապատասխանում է հիմնական բային համադաս, «և» շղկապով կապակցված դիմադր  
 բայը (հմտ. «դարձան և ասեն» – ἀπέστρεψαν... λέγοντες (Յովն. Գ 9), նաև երեք անգամ՝  
 առանց շղկապի), յոթ անգամ՝ ժամանակի կամ պատճառի երկրորդական նախադասու-  
 թյունը, նաև յոթ անգամ՝ անցյալ դերբայը:

<sup>53</sup> Ավելի բարդ դեպք է հետևյալը՝ «նօսեալ զմայր նորա Մարիամ Յովսեփու ...» –  
 μνησθεισῆς τῆς μητρὸς αὐτοῦ Μαρίας τῷ Ἰωσήφ... (Մթ. Ա 18). Հունարեն կրավորական  
 դերբայի իմաստն արտահայտված է ներգործական դերբայով, իսկ սեռականով տրամաբա-  
 նական ենթակայի փոխարեն հայցականով ունենք ուղիղ խնդիր:

(Մթ. ԻԶ 32), «և եղև ի քահանայանալն նորա» – ἐγένετο δὲ ἐν τῷ ἱερατευσίῳ αὐτὸν (Ղկ. Ա 5),

բ) նախդիրը համապատասխան վերացական գոյականի հետ՝ «յետ չարչարանացն իւրոց» – μετὰ τὸ παθεῖν αὐτὸν (Գծ. Ա 3), «ի կամաց» – τοῦ θέλειν (Բ Կոր. Ը 11),

գ) սլարագա երկրորդական նախադասություն՝ «քանզի ինքն գիտէր զամենայն» – διὰ τὸ αὐτὸν γινώσκειν πάντας (ՅՃ. Բ 4), նաև ՅԿ. Դ 2, Հմտ. նաև διὰ τὸ μὴ εἶναι τόπον – «վասն զի չէր նոցա տեղի»<sup>54</sup>,

դ) որոշիչ երկրորդական նախադասություն՝ «աչս որովք ոչ տեսանիցին և ականջս որովք ոչ լսիցեն» – ὀφθαλμοὺς τοῦ μὴ βλέπειν καὶ ὠτα τοῦ μὴ ἀκούειν (Հո. ԺԱ 8)<sup>55</sup>,

ե) նախդիրը և գոյականացնող հոդը որևէ կերպ արտացոլված չեն՝ «անարգել» – τοῦ ἀναθεμάζεσθαι (Հո. Ա 24), «արժան... երթալ» – ἄξιον τοῦ πορευθῆναι (Ա Կոր. ԺԶ 4), «մատնեսցեն զնա... այգանել» – παραδώσουσιν εἰς τὸ ἔμπαίξαι (Մթ. Ի 19):

Մեծ մասամբ հետևյալ ոչ բառացի եղանակներով<sup>56</sup> է թարգմանվել հունարեն հայցականն անորոշ դերբայի հետ՝

ա) Հայերենի համար օրինաչափ տրական հոլովով ենթակայով օտուված անորոշ դերբայով՝ «Եւ եղև... իջանել հոգւոյն սրբոյ» – ἐγένετο δὲ... καταβῆναι τὸ πνεῦμα τὸ ἅγιον (Ղկ. Գ 21-22), այստեղ դարձվածը կախված է երրայերենի ազդեցություն համարվող ἐγένετο («եղև») բայից, Հմտ. նաև Ղկ. Թ 37, Գծ. ԻԱ 1, ԻԷ 44, ԻԸ 17. նույն եղանակով է այն թարգմանվել հունարեն ὥστε շղկապին համապատասխանող «մինչ» շղկապից հետո՝ «մինչ և մեկնել նոցա» – ὥστε ἀποχωρισθῆναι αὐτοῦς (Գծ. ԺԵ 39)<sup>57</sup>, տե՛ս նաև Մթ. Ը 24, ԺԳ 2, 32, ՄԿ. Գ 20, Դ 32, Բ Կոր. Է 7, Փլպ. Ա 13,

բ) ուղիղ խնդիր երկրորդական նախադասությամբ՝ «ոչ կամիմ եթէ սգէտք իցէք» – οὐ θέλω γὰρ ὑμᾶς ἀγνοεῖν (Ա Կոր. Ժ 1), նաև Ղկ. Բ 12, Գ 20, Դ 41, Բ Կոր. Է 7, Փլպ. Ա 13,

գ) անորոշ դերբայով և «զ-» նախդիրով բացառական հոլովով՝ «որպէս ասեն ոմանք զմէնջ ասել» – καθὼς φασίν τινες ἡμᾶς λέγειν (Հո. Գ 8), նաև Եփսեբրոսի Քրոնիկոնում՝ «բայց թագաւորել աշխարհին նախ զաղովրայ ասեն» – βασιλεῦσαι δὲ τῆς χώρας πρῶτον λέγεται Ἀλῶρον (Եւս. քր. ա 46):

Ոչ բառացիության արտահայտություններից է նաև մասնական սեռականի թարգմանությունը բացառական հոլովով՝ «մի յանդամոց քոց» – ἐν τῶν μελῶν σου (Մթ. Ե 29), նաև Մթ. Զ 29, Ժ 42, ներկա ժամանակով բայերի ըստ իմաստի թարգմանությունն ապառնի ժամանակով՝ «որդի մարդոյ մատնելոց է» – ὁ υἱὸς ἀνθρώπου παραδίδοται (ՄԿ. Թ 30), նաև Մթ.

<sup>54</sup> Յովհաննու Ոսկեբերանի ի մեկնությունէ Մատթէի, ձառ Ա, էջ 42-43:

<sup>55</sup> Հմտ. ավելի բառացի թարգմանությունը՝ «աչս տեսանելոյ և ականջս լսելոյ» (Բ Օր. ԻԹ 4):

<sup>56</sup> Բառացի թարգմանությունն գեպքերի մասին տե՛ս ստորև:

<sup>57</sup> Հմտ. Մ. Մ ի ն ա ս ե ա ն, նշվ. աշխ., § 347-8:

ԺԱ 3<sup>8</sup>:

Դասական շրջանում թարգմանված կարևոր հուշարձան է այսպես կոչված «Նիկիական»՝ Նիկիայի տիեզերական և Անկյուրայի, «Կեսարիայի»<sup>59</sup>, Նեոկեսարիայի, Անտիոքի, Գանգրայի, Լաոդիկեի տեղական ժողովների կանոնների ժողովածուն, որոնք կազմում են «Հայոց Կանոնագրքի»<sup>60</sup> ամենավաղ թարգմանական շերտը: Չնայած հայերեն «Նիկիական» կանոնները մեղ են հասել ոչ նախնական խմբագրված տեսքով, կան բավարար չափով զուգահեռ հատվածներ, որոնք թույլ են տալիս գատել թարգմանական տեխնիկայի մասին:

Այն աչքի է ընկնում որոշակի ազատությամբ՝

ա) Հաճախակի են բառերի տեղափոխությունները՝ τῶν ἑαυτῶν ἀνδρῶν ἀνεχώρησαν (Գանգր. նախաբան 79.20) – «հեռացան յարեաց իւրեանց» (580), τὸν οἶκον τοῦ θεοῦ εὐκαταφρόνητον εἶναι καὶ τὰς ἐν αὐτῷ συνάξεις (Գանգր. V. 81.15-16) – «զտուն Աստուծոյ եւ որ ի նա ժողովն ժողովիցին արհամարհել» (194.1-2), εἰς τὸν πάντων ἕφορον καὶ κριτῆν θεόν (Անտ. XXIV. 49.20) – «յԱստուած, որ այցելուն է ամենայնի եւ օրէնսգիր գատաւոր» (220.6),

բ) երբեմն փոխված են բառերի քերականական կապերը ἀξίον εὐρατο μισθόν (Socr.<sup>61</sup> 33.23) – «ըստ արժանի գիւտի զհատուցումն չարեաց իւրոց» (Նիկ. Կոնստ. 131.10-11<sup>62</sup>) (Հմմտ. Սոկր.<sup>63</sup> 27. «զարժանն եգիտ վարձ», բառացի թարգմանություն), γάμου συνοίκησιν σεμνήν (Գանգր. վերջաբան 83.17) – «զամուսնութեան բնակութիւն պարկեշտութեամբ» (200.5), τῷ ἁγίῳ χρισµατι (Լաւոգ. VII.73.9) – «զաւծումն սրբութեան» (230.6-7), αὕτη γὰρ πρώτη κατάγνωσις παρὰ τοῖς ἔθνεσιν (Լաւոգ. XXX.75.24) – «զի նախ այսու մեղադրեն զմեզ հեթանոսք» (236.1),

գ) «ընդ նմա իցեն» (Անտ. ԺԸ 217.8) – συνεῖναι αὐτῷ (XIX.48.7) օրինակում բայի նախածանցը թարգմանություն մեջ փոխարինված է այն լրացնող խնդրի նախդրով,

դ) «զի մի գտցուք հաւասարորդ տաւնից նոցա և մեզաց» (Լաւոգ. ԼԷ

<sup>58</sup> Սակայն ապառնիի իմաստով ներկան երբեմն թարգմանված է և ներկայով՝ Մթ. ԺԱ 3, Մկ. Թ 30:

<sup>59</sup> Չակերտները բացատրվում են այն փաստով, որ Կեսարիայի ժողով չի եղել. այդ անվանումը շփոթություն արդյունք է, տե՛ս Մ.-Է. Շիրինյան, Գ. Մուրադյան, Հունարենից թարգմանված եկեղեցական կանոնները, բնագրագիտական դիտողություններ. – ՊԲՀ, 2000, N 3, էջ 213-225:

<sup>60</sup> Կանոնադիրք Հայոց, աշխատասիրություն՝ Վ. Հակոբյանի, Հ. Ա. Երևան, 1964 (այսուհետե՛ն Նիկ., Անտ., Գանգր., Լաւոգ.): Հունարեն սկզբնագրերի էջերը նշվում են ըստ Հետեյի Հրատարակությունների՝ P. P. J o a n n o u, Les canons des concils œcuméniques, t. I, Roma, 1962 (Նիկիայի ժողովի կանոնները), F. L a u c h e r t, Die Kanones der altkirchlichen Concilien, Freiburg, Leipzig, 1896՝ տեղական և «Երկրորդ առաքելական» ժողովների կանոններ:

<sup>61</sup> Կոնստանտինոս կայսեր համակր Նիկիայի ժողովին չի պահպանվել հունարեն կանոններում. այն գտնում ենք Սոկրատես Սքոլաստիկոսի «Եկեղեցական պատմություն» տեքստում. տե՛ս S o k r a t e s K i r c h e n g e s c h i c h t e, Herausgegeben von G. C h. Hansen, Mit Beiträgen von M. Sirinjan Berlin, 1995.

<sup>62</sup> Հայերեն «Կանոնագրքում» Կոնստանտինոս կայսեր համակր Հաջորդում է Նիկիայի կանոններին, և, ինչպես և կանոնները, թարգմանված է դասական եղանակով:

<sup>63</sup> Սոկրատես Սքոլաստիկոսի «Եկեղեցական պատմություն» թարգմանությունը իսկու հունարեն է՝ Սոկրատայ Սքոլաստիկոսի Եկեղեցական պատմութիւն, Վաղարշապատ, 1897:

237.9-10) – μηδὲ συνεορτάειν αὐτοῖς (Լաւոդ. XXXVII.76.18) օրինակում էլ նախածանցավոր բայը նկարագրական եղանակով է թարգմանված մի ողջ բառակապակցութեամբ («և մեղաց» հավելումը հունարենում արտահայտված մտքին բարոյական զնահատական է ավելացնում),

ե) բարդ բառերի նկարագրական, ըստ իմաստի թարգմանութուն՝ *κακοδοξίας* (*Socr.* 33.24) – «չարաչար և հայհոյեալ կուփանաբ» (Նիկ. Կոնստ. 131.12-13), հմմտ. «չարափառութիւն» (Սոկր. 27), *ἐπισυιάπτειν* (Լաւոդ. XVII.74.7) – «միահամուռ զմիմեանս ղհետ... ասել» (Ժէ 232.12-13),

զ) հրամայական անորոշ դերբայը միշտ թարգմանված է հարկադրանքի նշանակութուն ունեցող բայական ձևերով (հմմտ. բառացի թարգմանութունը նախահունարան շրջանում թարգմանված «Երկրորդ Առաքելական», Կոստանդնուպոլսի և Եփեսոսի կանոններում)՝ *μένειν* *ἐν τῷ κλήρω* (Նիկ. VIII.30. 8) – «կացցեն ի պաշտաման» (122.1), *μὴ... δεχθῆναι* (Անտ. VI.45.2) – «չէ արժանն... ընդունել» (209.14-15), *περὶ τοῦ μὴ συγχωρεῖν* (Լաւոդ. IX.73.16) – «չէ մարթ» (236.1),

է) որոշչի առումով և դոյականացված դերբայները սովորաբար թարգմանված են հարաբերական նախադասութուններով՝ *των ὀνομαζόντων ἑαυτοὺς καθαρῶς* (Նիկ. VIII. 30.3-4) – «ոյք անուանեն զինքեանս... սուրբ» (121.12), *Πορφύριος... συστησάμενος* (*Socr.* 33.22-24) – «Պորփիրոս... հաստատեաց» (Նիկ. Կոնստ. 131.8-9, հմմտ. Սոկր. 27 «Պորփիրոս... կանգնեալ»), *παρὰ πρεσβυτέρου γεγαμηκότος* (Գանգր. IV.81.12) – «յերիցուէ, որ ամուսնացեալ իցէ» (193.12), *του ἐγκεχειρισμένου τὰ τοιαῦτα* (Գանգր. VII. 81.23) – «որ ձեռնադրեաց զայնպիսին» (194.7-8), *τοὺς τολμῶντας τοῦτοις κοινωρεῖν* (Անտ. I.43.21) – «որք սոցին հաւասարել համարձակեցան» (206.1), *πάντας τοὺς εἰσιόντας* (Անտ. II.43.24) – «ամենքին, ով եւ մտանիցեն» (206.6),

ը) պարադայի առումով կիրառված դերբայները հաճախ թարգմանված են ստորոգյալին համարաս դիմավոր բայով՝ *καθαίρεθεις... τολμήσειε* (Անտ. IV.44.16-17) – «որոչեցաւ եւ համարձակեցաւ» (208.8-9), *Socr.* 34.7-8 *φωραθείη (ῥηθβεργվել է օրաթէյη) κρύψας* – «տեսանիցի առ ումեք կամ իբրեւ թաքոյց» (Նիկ. Կոնստ. 132.8-9, հմմտ. Սոկր. 27 «ունիցի... թաքուցեալ ինչ»), *καταφρονῶν... ἐθέλοι* (Գանգր. VI.81.18) – «եւ արհամարհիցեն... եւ կամիցին» (194.4), *ἐγκρατεῦσιτο... ἀναχωρήσας* (Գանգր. IX.81.28-29) – «պահեն... եւ հեռանայցեն» (194.13-14), *պարագա երկրորդական նախադասութեամբ՝ ἀποδεχόμεθα, οὐ συγκλείοντες* (Գանգր. վերջարան 83.23-24) – «ընդունիմք, իբրեւ ոչ փակեմք կամ զրաւեմք» (200.11), «ի» նախդրի հետ անորոշ դերբայով՝ *ἐπιστρέφοντας... κατηχεῖσθαι* (Լաւոդ. VIII.73.12-14) – «ի դառնալն իւրեանց... ուսցին»,

թ) «բացարձակ սեռականը» թարգմանված է ժամանակի կամ տեղի պարագա երկրորդական նախադասութուններով՝ *γυνομένων εὐχῶν* (Գանգր. նախարան 80.11) – «ուր լինէր աղաւթք» (580), *μὴ συνόντος τοῦ πρεσβυτέρου* (Գանգր. VI.81.19) – «իբրեւ ոչ իցէ երէցն» (194.4-5), *συνόδου γενομένης* (Անտ. VI.45.3) – «յորժամ ժողով լինիցի» (210.1), *համարաս նախադասութուններով՝ τῶν μὲν ἀθῶον τὸν κρινόμενον*

ἀποφαινόντων, τῶν δὲ ἔνοχον (Անտ. XIV.47.6-7) – «եւ ոմանք ի նոցանէ անպարտ եւ արդար յայտ առնել կամիցին եւ ոմանք ի նոցանէ պարտաւորել» (214.13-215.1),

ժ) որոշ քերականական կապեր արտահայտված են բառիմաստներով՝ τὰ τῆς ἐκκλησίας (Գանգր. VI.81.18) – «զեկեղեցւոյ պէտս» (194.4), κατὰ τῆς ἐκκλησίας (Գանգր. նախաբան 79.25) – «զկարգս եկեղեցւոյ» (580):

Այսպիսով, ինչպես վկայում են և՛ հրապարակի վրա եղած մի շարք հետազոտություններ, և՛ մեր գիտարկումները, դասական թարգմանություններում իմաստային ճշգրտության կողքին դիտվում է զգալի ձևական անկախություն սկզբնազրից՝ պայմանավորված երկու լեզուների առանձնահատկություններով: Սակայն վերն արդեն նշեցինք, որ այդ անկախությունը բացարձակ չի եղել. հունարենի ազդեցության թեկուզ և չդիտակցված, առանձին դեպքեր նկատելի են և այս խմբի թարգմանություններում: Դրանցից մի քանիսը նույնպես գրավել են հետազոտողների ուշադրությունը:

Քննելով բարդ բառերի կիրառությունն Աստվածաշնչում՝ է. Բենվենիստը ցույց է տվել, թե հունարեն ինչ տիպի բառերի են գրանք համապատասխանում (նախածանցավոր, պարզ, բարդ, ողջ բառակապակցություններ), առանձնահատուկ քննության ենթարկելով բառապատճենումները կամ հունարենի կաղապարով կերտված նոր բառերը: Բառապատճենումն, ըստ Բենվենիստի, կյանքի էր կոչված թարգմանության պահանջներով, սակայն չէր հակասում հայերենի՝ հեռուցմամբ բարդ բառեր կազմելու բնիկ միտմանը: Պատճենվում էին «տեխնիկական տերմինները» («ողակէզ» – ὀλόκαυστος, «քարկոծ» – λιθόβολος, «նորատունկ» – νεόφυτος, «եղբայրասպան» – ἀδελφόκτονος) և «պոետիկ» բառերը («մահաբեր» – θανατηφόρος, «ամենակալ» – παντοκράτωρ)<sup>64</sup>:

Մենք բարդ բառերի պատճենման հետևյալ հետաքրքրական դեպքերն ենք արձանագրել Եվսեբիոսի «Բրոնիկոնում»՝ «երկթևեան» – διπτέρος (Եւս. քր. 22), «չորեքթևեան» – τετραπτέρος (Եւս. քր. 22), «երկդիմի» – διπρόσωπος (Եւս. քր. 22), «չորեքմարմին» – τετρασώματος (Եւս. քր. 23), «չնագլուխ» – κυνοκέφαλος (Եւս. քր. 22). կան և երկու բառով՝ մեկը բառացի, մյուսն՝ ըստ իմաստի, թարգմանության դեպքեր՝ «միաշուրթն համալեզու» – ὁμόγλωσσος (Եւս. քր. 52), «որոց կերպարանք կիսադից դիւցազանցն էին» – τὴν ἰδέαν ἡμιδαίμονα (Եւս. քր. 47), Աստվածաշնչում՝ «անձեռագործ» – ἀχειροποίητος (Կող. Բ 11), «անձնասէր» – φίλαυτος (Բ Տիմ. Գ 2), «աշխարհակալ» – κοσμοκράτωρ (Եփես. Գ 12), «աստուածասէր» – φιλόθεος (Բ Տիմ. Գ 4), «աստուածպաշտութիւն» – θεοσέβεια (Յոբ. ԻԸ 28), «բարեխրատ» – καλοδιδάσκαλος (Տիտ. Բ 3), «բարեպաշտ» – εὐσεβής (Միք. ԺԱ 17), «բարեսէր» – φιλάγαθος (Իմաստ. է 22, Տիտ. Ա 8), «բարերար» – ἀγαθοποιῶν, εὐεργέτης (Ղկ. Զ 33), «զիւրաշարժ» – εὐκίνητος (Իմ. է 22), «եղբայրասէր» – φιλάδελφος (Ա

<sup>64</sup> E. Benveniste, Le développement des mots composés en arménien classique.– REArm, t. IV, 1967, p. 1-14; Traduction arménienne des composés grecs.– REArm, t. V, 1968, p. 1-7.

2, 29), «երկայնակեաց» – μακρόβιος (Բ Մկ. ԺԵ 14), «երկայնամիտ» – μακρόθυμος (Ել. 17 6), «երկրագործութիւն» – γεωργέω (Ա Մն. Է 26), «ինքնակամ» – αυθαιρέτως (Բ Մկ. Զ 19), «կռապաշտ» – εἰδωλολατρης (Ա Կոր. Ժ 7), «հանդիտապատիւ» – ἰσοτιμος (Բ Պետ. Ա 1), «մայրաքաղաք» – μητρόπολις (Յես. Ժ 2, Եսթ. Թ 19), «մահաբեր» – θανατόφορος (-թուղց. ԺԹ 22, Յոր. 1 Գ 23), «մարգասէր» – φιλανθρώπως (Գժ. ԻԷ 3), «մեծարանեմ» – μεγαλορρημονέω (Սղ. 17 26), «նորագործ» – νεόκτιστος (Իմ ԺԱ 18), «շատխօսութիւն» – πολυλογία (Առակ. Ժ 19), «ողջամիտ» – σώφρων (Տիտ. Բ 2), «որդեծնութիւն» – τεκνογονία (Ա Տիմ. Բ 15), «չարաբարոյ» – κακόφρων (Առակ. ԺԱ 22), «չարագործ» – κακούργος (Միք. ԺԱ 35), «պտղաբեր» – καρποφορών (Կող. Ա 10), «սակաւակեաց» – ὀλιγόβιος (Յոր. ԺԱ 3, ԺԴ 1), «սահմանադրութիւն» – ὁροθεσία (Յեսու. Ժ 2), «սնապարծ» – κενόδοξος (Գղ. Ե 26), «ցանկասէր» – φιλήδονος (Բ Տիմ. Գ 4), «քաղցրաբանութիւն» – χρηστολογία (Հռ. ԺԶ 2), «օտարադի» – ἄλλογενής (Ել. ԻԹ 33), «օտարասէր» – φιλόξενος (Ա Պետ. Դ 9), «օրինագրեմ» – νομοθετέω (Բ Օր. ԺԷ 10):

Աստվածաշնչու մ հանդիպում են նաև «համ-» և «նախ-» նախածանցներով բառեր՝ «համամիտ» – ὁμόφρων (Ա Պետ. Գ 8), «համարուեստ» – ὁμότεχνος (Գժ. ԺԸ 3), «նախադուռ» – τὰ πρόθυρα (Եղեկ. Ը 3), «նախաստեղծ» – πρωτοπλαστος (Իմ. Է 1): Ճիշտ է, ὁμο- նախածանց չէ, այլ ὁμος «ամբողջ» ածականի արմատը, իսկ վերջին օրինակում «նախ» նախածանցը թարգմանում է արտո-՝ «առաջին» դասական թվականի արմատը: Հետագայում այդ նախածանցները լայն կիրառում ստացան նախահունարան և հունարան շրջանի թարգմանիչներին մոտ<sup>65</sup>:

Հունարեն սυν- նախածանցով բառերի դասական կանոնավոր համարժեքը ետադաս «-կից» արմատով բարդ բառերն են «ազգակից» – συγγενής (Գ Մկ. Դ 10), «անկողնակից» – σύγκοιτος (Միք. Է 5), «բարձակից» – συνανακείμενος (Մթ. ԺԴ 33), «գերեկից» – συναιχμάλωτος (Հռ. ԺԶ 7), «գործակից» – συνεργός (Բ Մկ. Ը 7), «լծակից» – σύζυγος (Փիլիպ. Դ 3), «խորհրդակից» – σύμβουλος (Միք. ԽԲ 22), «ուրախակից լինիմ» – συγχαίρω (Փիլիպ. Բ 17, 18), «սնդակից» – συνεκτραφεῖς (Բ Մն. Ժ 8): Այս եղանակը (ինչպես և «-կցեմ»-ով բայերի կերտումը) կիրառվել է և նախահունարան և հունարան թարգմանութուններում՝ «բաղ-», «հոմ», «յար-», «չար-», «պար-» նախածանցներով պատճենումներին զուգահեռ<sup>66</sup>:

<sup>65</sup> Օրինակ, «համատոհմիկ» (Փիլ. տես. 8) – ὁμόφυλος (Philo IX.118), «համազգի» (Բրս. ձն. 2) – ὁμογενής (PG 31.1460, Փիլ. լին. 1.76, 3.62), «համապատիւ» (Բրս. KB III.185) – ὁμότιμος (PG 31.357), «նախասացեալ» (Դ. Պորփ. 158.27) – προειρημένος (197.14), «նախադասեմ» (Դ. Պորփ. 184.19, 188.25) – προτασσω (208.13, 210.5), «նախախնամութիւն» (Նիււ. 4. Մ. 232) – προμήθεια (PG 35.836 [95]), «նախապատուելով» (Բրս. Հց. 13[37]) – προτιμήσαντες (PG 31.897[25]), «նախայայտ» (Բրս. Հց. 52[135]) – προδήλωσ (PG 31.929[20]):

<sup>66</sup> Հմտ. «ախտակից» (Բրս. KB III.196, Փիլ. իմաստ. 107) – συμπαθής (PG 31.373, Philo VI.150), «գոյակից է» (Դ. Պորփ. 137) – συνυπάρχει (3[442]), «մշտնջենաւորակից» (Դ. Պորփ. 137) – συναιδιον (5[444], «խնդակից լիցի ինձ» (Փիլ. ալլաբ. 169) – συγχαρείται μοι (Philo I.276 = Մն. ԻԱ 6 – «ուրախ լինիցի ընդ իս»), «տրտմակից և ցաւակից լինելի» (Փիլ. իմաստ. 100) և – συναλγέω (Philo VI.126), «ձայնակցեմ» (Դ. Պորփ. 8.2) – συμφώνέω (83.10), նախահունարան թարգմանութուններում՝ «աղաւթակից լինիմ» (Առաք. ԽԳ 87.10)



Հունարեն նախածանցավոր բառերի բարդ բառերով թարգմանությունների այլ դեպքեր են «դժուարակիր» – δυσβάστακτος (Մթ. ԻԳ 4). «վերնայարկ» – τῶ ὑπερώα (Երեմ. ԻԲ 15, Սղ. ՃԳ 3): Հունարեն ծածկ- նախածանցը «դժուար-»-ով (և «դժուխ-»-ով) թարգմանելը հետագայում լայն տարածում գտավ Հունարան դպրոցի թարգմանություններում<sup>67</sup>:

Դասական թարգմանություններում նկատվել են նաև իմաստային պատճենումներ: Է. Բենվենիստը մատնանշել է երեք այդպիսի բառ «վիճակ» (բառացի «բաժին ընկածը»), որը Հունարեն κληρος-ի ազդեցությամբ ստացել է «կղեր» իմաստը, և դրանից կազմված «վիճակալուր» ու «վիճակալորություն» բառերը<sup>68</sup>, «մեհենակապուտ» (Գծ. ԺԹ 26), որը Հունարեն ιεροσολος («սրբապիղծ») բառի տառացի թարգմանություն է<sup>69</sup>, «անասուն» («կենդանի»). Հունարեն ἄλογος նշանակում է ոչ թե «խոսելու ընդունակությունից զուրկ», այլ «բանականությունից զուրկ», սակայն λόγος-ն ունի և՛ «խոսք», և՛ «բանականություն» իմաստը, և ἄλογος-ը թարգմանողն ընկալել է բառի այդ առաջին իմաստը<sup>70</sup>:

Շարահյուսական երկու Հունարանություն Աստվածաշնչում նկատվել է Ջ. Բոլոնյեզին<sup>71</sup>: Մեկը վերաբերում է «երկնչիմ» բայի խնդրառությունը. սովորաբար այն պահանջում է բացառականով խնդիր (օրինակ, «երկնչիմ ի նոցանէ»), ինչը հեղինակը բացատրում է իրանական ազդեցությամբ, իսկ «երկեան երկիւղ մեծ» (Մկ. Դ 41, Ղկ. Բ 9) արտահայտություն մեջ հայցական Հոլովը Հունարանություն է՝ ἐφοβήθησαν φόβον μέγαν: Իտալացի հայագետի մատնանշած մյուս Հունարանություն է «անուն է» արտահայտության հետ ստացական իմաստով տրականի կիրառությունը՝ «որում անուն էր Նաղարեթ» – ἡ ὄνομα Ναζαρέθ (Ղկ. Ա 26), «որում անուն էր Յովսեփ» – ὃ ὄνομα Ἰωσήφ (Ղկ. Ա 27), «որում անուն էր Յաի-

– συνεύχομαι (XLV.7.16), «վայելչակից» (Առ. որս ժո) – συμπρέπων (PG 35.1156.40):

<sup>67</sup> Հ. ր. Ա ճ ա յ ա ն, նշվ. աշխ., էջ 127, օրինակ, «դժուարմեքագոյն» (Բրս. յուղիտ, Փիլ. տես. 5) – δυσφορος (PG 31.248), ἀφορητότερον (Philo IX.112), «դժուարաշարժ» (Նազ. ճ.2.30.6, Փիլ. ք. 183) – δυσκίνητος (PG 35.440.3, Philo VII.156):

<sup>68</sup> Հմմտ. κληρικός բառի մեկ այլ համարժեքը «ժառանգալուր», «երկրորդ առաքելական» կանոններում՝ Կանոնագիրք Հայոց, Հ. Ա, էջ 76.3, 77.10, 78.5, 79.7, 79.9, 79.13, 80.1, 80.8, 83.1, 89.4, 90.1, 90.9, 91.1, 91.5, 92.2, 92.8, 92.14, 95.1, 96.8 – F. L a u c h e r t, Die Kanones der altkirchlichen Concilien, p. 1.16, 2.15, 2.27, 3.14, 3.15, 3.19, 3.22, 4.1, 4.27, 8.27, 9.12, 9.21, 10.1, 10.7, 10.18, 10.25, 11.1, 11.30, 12.25. այն նույնպես իմաստային պատճենում է, չէ որ κληρος նշանակում է նաև «ժառանգություն»:

<sup>69</sup> Հմմտ. նրա «սեղանակապուտ» համարժեքը «Պիտոյից գրքում» (Գիրք պիտոյից, աշխատասիրություն Գ. Մուրադյանի, Երևան, 1993, էջ 71.4)՝ «խրատի» սահմանման մեջ, ինչպես նաև «տաճարակապուտ»՝ Թեոնի նախակրթություններում (Թեոնի նախադասական կրթության հանդերձ Հույն բնագրով, աշխատություն Զ. Մանանդյանի, Երևան, 1938, էջ 112), նաև «սեղանակապուտ» (նույն տեղում):

<sup>70</sup> E. B e n v e n i s t e, Elements parthes en arménien.– REArm, nouvelle serie, t. I, 1964, p. 36-37. Նույն Հունարեն բառի «անբան» թարգմանությունն էլ կարող էինք համարել իմաստային պատճենում, սակայն այս դեպքում իրավիճակն այլ է. իմաստային պատճենման է ենթարկվել արդեն «բան» պարզ բառը, սկզբնապես «խոսք» նշանակությամբ, որը Հունարեն λόγος-ի ազդեցությամբ ստացել է «բանականություն», ինչպես և աստվածաբանական ու փիլիսոփայական բոլոր հարակից իմաստները. Հմմտ. «անբան անասուն» բառակապակցությունը:

<sup>71</sup> G. B o l o g n e s i, Nuovi aspetti dell' influsso Iranico in Armeno.– ՀԱ, 1961, էջ 658-683, տես հատկապես 682-683:

րոս» – ὡ ὄνομα Ἰάϊρος (Ղկ. Ը 41), մինչդեռ կան օրինակներ, որոնցում նույն հունարեն տրականի դիմաց հանդես է գալիս հայերենի համար օրինաչափ սեռական հոլովը՝ «որոյ անուն էր Սիմէովն» – ὡ ὄνομα Συμεων (Ղկ. Բ 25), «և էր անուն նորա էմմաուս» – ἡ ὄνομα Ἐμμαους (Ղկ. ԻԲ 13): Նույն սեռական հոլովը էական բայի հետ կիրառվում է և հունարեն «ունենալ»<sup>72</sup> բայի դիմաց՝ «երկու պարտապանք էին ուրումն փոխատուի» – δύο χρεοφειλέται ἦσαν δανειστῆ τιμι (Ղկ. է 41), «ոյց իցեն երկու հանդերձք» – ὁ ἔχων δύο χιτώνας (Ղկ. Գ 11)<sup>73</sup>:

Բոլորնյեզին եզրակացնում է, որ Նոր Կտակարանի հայերեն թարգմանության մեջ առկա է շարահյուսական դարձվածների երկու շերտ մեկը հունարենի ազդեցությունը նախորդող, մյուսը՝ այդ ազդեցությունը կրող:

Մյուս վաղ իմաստային պատճենումներից հիշատակության արժանի է «վկայ» (և դրանից ածանցված «վկայեմ», «վկայութիւն», «վկայաբանութիւն», «նախավկայ» և այլն) բառը, որը հունարենի ազդեցությամբ ստացել է «մարտիրոս» իմաստը, «երէց», որի «ավագ» իմաստին προσβύτερος-ի ազդեցությամբ ավելացել է «քահանա» իմաստը<sup>74</sup>, «ժողովրդական» – λαϊκός (ի հակադրություն կղերականի)<sup>75</sup>:

Հետևյալ բայերն ու բառակապակցությունները ևս հունարենի ազդեցությամբ օժտվել են լրացուցիչ իմաստային լիցքով. «լնում» բայը «լի առնել զթափուրն, լցուցանել» կոնկրետ իմաստից բացի, հունարենն ավելացնում է նաև վերացական «լրացուցանել, կատարել» իմաստը՝ «լցեալ են աւուրք» – πεπλήρωται γάρ αἱ ἡμέραι μου (Մնն. ԻԹ 21), «առ ի լնուլ բանին Տեառն» – τοῦ πληρωθῆναι λόγου κυρίου (Բ Մնա. ԼԶ 21), «լցցի որ ասացաւ ի Տեառնէ» – ἵνα πληρωθῆ τὸ ῥηθὲν ὑπὸ κυρίου (Մտ. Ա 22): «Դնեմ» բայը կոնկրետ «գետեղել, կացուցանել» իմաստի կողքին, հունարենն ավելացնում է նաև վերացական «կարգել, հաստատել» իմաստը՝ «օրէնք զոր եղ Մովսէս» – ὁ νόμος ὃν παρέθετο Μωσῆς (Բ Օր. Դ 44), «օրինադրի» – νομοθετέομαι (Բ Օր. ԺԷ 10, Եբբ. Ը 6), «օրէնս դնել» – νομοθετέω (Բ Մկ. Գ 15): «Պահեմ» բայը բերվող հատվածում հանդես է եկել ոչ ուղիղ իմաստով, այլ փլված բայի ազդեցությամբ նշանակում է «հետևել, ենթարկվել»՝ «պահեսջիք զօրէնս զայս» – καὶ φυλάξεσθε τὸν νόμον (Ելք. ԺԳ 10):

Հունարենում «բարձրացնել» (βαστάζω, ἀναφέρω, αἶρω) իմաստով բայերն ունենում են և փոխաբերական «վերացնել, ոչնչացնել» իմաստը՝

<sup>72</sup> Հմտ. նաև հայերեն տրականը հունարեն սեռականի դիմաց՝ «ոչ է ձեզ գիտելի գժամս» – οὐχ ὑμῶν ἐστὶν γινῶναι χρόνους (Գժ. Ա 7):

<sup>73</sup> Վերջին եղանակը, ինչպես վերը նշվեց, «Բարոյախօս»-ում հունարեն «ունենալ» բայի թարգմանության կանոնավոր եղանակ կարելի է համարել, ընդ որում մեծ մասամբ գոյականների, ինչպես նաև դերանունների հոգնակի թվի դեպքում (բացի անձնական դերանուններից), սեռական և տրական հոլովները ձևով համընկնում են, և երկուսի հանդես գալն էլ հավասարապես հնարավոր է:

<sup>74</sup> Տե՛ս Կանոնագիրք Հայոց, Հ. Ա. բազում վկայություններ, օրինակ, էջ 75.6, 80.5, 96.3, 154.1, 187.1, 193.12, 205.9, 230.11, 256.10, 344.11 – F. Lauchert. Նշվ. աշխ., p. 1.2, 3.26, 12.20, 29.28, 36.20, 81.12, 43.14, 73.15, 56.19, 127.14:

<sup>75</sup> Տե՛ս Կանոնագիրք Հայոց, Հ. Ա, էջ 80.3, 87.6, 90.15, 91.3, 91.6, 92.6, 92.14, 96. 8 – F. Lauchert, Նշվ. աշխ., p. 3.24, 7.11, 9.28, 10.1, 10.6, 11.1, 12.26.

«բարձրուք զյիշատակս նորա յերկրէ» – ἄρωμεν τὴν μνήμην ἐκ γῆς (Առակ Ա 12), «բարձեր զանտառն յերկրէ Յուդայ» – ἐξήρας τὰ ἄλσθη ἄπὸ τῆς γῆς Ἰουδα (Բ Մնաց. ԺԹ 3), «զհիւանդութիւնս մեր վերացոյց և զցաւս մեր հրարձ» – τὰς ἀσθενείας ἡμῶν ἔλαβεν καὶ τὰς νοσοὺς ἐβάστασεν (Մտ. Ը 17), «զմեղս բազմաց վերացոյց» – ἀμαρτίας· πολλῶν ἀνήνεγκεν (Ես. ԾԳ 12): «Առնեմ զկամս» նշանակում է «կամքը կատարել»՝ «արարից զամենայն զկամս քո» – ποιήσω πᾶν θέλημά σου (Գ Թագ. Ե 22), «արացես զկամս իմ» – ποιήσεις τὸ θέλημά μου (Ե 23)<sup>76</sup>:

Աստվածաշնչում «Հայցականն անորոշ դերբայի» հետ դարձվածի վկայութուններ է մատնանշել Մ. Մինասյանը, ցափոք, առանց հունարեն գուգահեռները ներկայացնելու<sup>77</sup>: Վերը ցույց տվեցինք, որ հունարեն համապատասխան դարձվածը թարգմանվել է տարբեր եղանակներով. այստեղ բերենք բառացի պատճենվելու ավելի սակավաթիվ դեպքերը՝ «որ ոչ կամէին զիս թագաւորել» – μή θελήσαντες με βασιλεῦσαι (Ղկ. ԺԹ 27), «կամիմ զձեզ անհոգս լինել» – θέλω δὲ ὑμᾶς ἀμερίμνους εἶναι (ա Կոր. Է 32), նաև «Արարից զձեզ լինել որսորդս մարդկան» – ποιήσω ὑμᾶς γενέσθαι ἀλιεῖς ἀνθρώπων (Մկ. Ա 17), «կամիմ զձեզ իմաստունս լինել» – θέλω δὲ ὑμᾶς σοφοὺς εἶναι (Հռ. ԺԶ 19), «նշանակեաց հոգովն սով մեծ լինել ընդ ամենայն աշխարհ» – ἐστήμανεν διὰ τοῦ πνεύματος λιμὸν μεγάλην μέλλειν ἔσεσθαι ἐφ’ ὅλην τὴν οἰκουμένην (Գժ. ԺԱ 28): Հատկանշական է, որ հինգից չորս դեպքում անորոշ դերբայն է «լինել»<sup>78</sup>:

Նշենք նաև «բացարձակ սեռականի» բառացի թարգմանություն մեկ օրինակ. «Եւ մինչ դեռ պշուցեալ հայէին ընդ երկինս երթալոյն նորա» – Καὶ ὡς ἀτενίζοντες ἦσαν εἰς τὸν οὐρανὸν πορευομένου αὐτοῦ (գժ. Ա 10), հունարեն գոյականացնող հոդի թարգմանությունը «զ» նախըրրով՝ «երթալք տուք զկայսեր՝ կայսեր, եւ զաստուծոյ՝ աստուծոյ» – ἀπόδοτε οὖν τὰ Καίσαρος Καίσαρι καὶ τὰ τοῦ θεοῦ τῷ θεῷ (Մթ. ԻԲ 21), «զաստուծոյն... զմարդկան» (Մթ. ԺԶ 23) – τὰ τοῦ θεοῦ... τὰ τῶν ἀνθρώπων, երկու հոլովական վերջավորությունների կուտակում, որպես հունարեն թեք հոլովով հանդես եկող հոդի օգնությունը գոյականացված թեք հոլով պարունակող բառակապակցություն համարժեք. «եկին առ իւ-

<sup>76</sup> Հունարենից հին ուսերեն թարգմանություններում իմաստային պատճենումներից բացի Կոստանդնուպոլսի անվանումը է «φρασεολογические кальки-гнезда» (Հմմտ. «լցեալ են աւուրք», «առ ի լնուլ բանին Տեառն», «լցցի որ ասացաւ ի Տեառնէ», նաև «բարձրուք զյիշատակս նորա յերկրէ», «բարձեր զանտառն յերկրէ Յուդայ», «զհիւանդութիւնս մեր վերացոյց և զցաւս մեր հրարձ», «զմեղս բազմաց վերացոյց») և «индивидуальные фразеологические кальки» (Հմմտ. «օրէնս դնել», «պահեսլիք զօրէնս զայս», «արացես զկամս իմ»). տե՛ս М. М. К о п ы л е н к о. Кальки греческого происхождения в языке древнерусской письменности". – "Византийский временник", т. 34, с. 141-150.

<sup>77</sup> Մ. Մինասյան, նշվ. աշխ., § 341:

<sup>78</sup> Հմմտ. պարականոն «Արեհասի վարքում», որն ըստ Վ. Կալցոլարիի դասական թարգմանություն է «Հայցականն անորոշ դերբայի հետ» դարձվածի բառացի թարգմանություն («գուլ» և «լինել» անորոշ դերբայների դեպքում) երկու օրինակները՝ V. Calzolari. Particolarità sintattiche e lessicali della versione armena del *Martirio di Andrea*, messa a confronto con Teone Armeno, *Le Museon*, т. 106, fasc. 3-4, 1993, pp. 267-288.

րեանցս» – ἤλαθον πρὸς τοὺς ἰδίους (Գծ. Դ 23):

Նման առանձնահատկություններ գիտվում են և ոչ թարգմանական հուշարձաններում. «զ' առ ի ներքոյս երկնից»<sup>79</sup>, «զ' առ ի միմեանց պատուեալ զգովութիւնս»<sup>80</sup>:

Մեր նպատակից դուրս է եղել ներկայացնել գասական թարգմանություններում տեղ գտած հունարանությունների սպառիչ պատկերը: Դրանք հազվագյուտ են և դժվար նկատելի, սակայն միանգամայն իրավացի է Յոս Վալտենբերգը, երբ փորձում է հունարան հայերենի առանձնահատկությունների արմատները մատնանշել գասական լեզվում<sup>81</sup>:

Եվ այսպես, հունարենի ազդեցությունը հայերենի վրա չի սահմանափակվում հունարան դպրոցով: Ճիշտ է, ամենավաղ դասական թարգմանություններում իմաստային ճշգրտության կողքին նկատվում է սկզբնագրի լեզվից որոշ անկախություն՝ պայմանավորված հայերենի առանձնահատկություններով, սակայն հունարենի ազդեցության առանձին դեպքեր առկա են արդեն այս խմբի թարգմանություններում: Հանդիպում են հունարենից պատճենված բարդ բառեր և իմաստային պատճենումներ, ինչպես և մի շարք շարահյուսական հունարանություններ:

#### ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

Առաք. – Կանոնք երկրորդ առաքելականք (Կղեմայ), Կանոնագիրք Հայոց, աշխատասիրություն Վ. Հակոբյանի, Հ. Ա. Երևան, 1964:

Բրս. KB III – Բ ա Ր ս ե Ղ Կ ե ս ա Ր ա ց ի, «Զբարկացողաց», «Զմախանաց», «Յաղագս գոհութեան». տե՛ս К. Мур а д я н, "Древнеармянские переводы гомилий Василия Кесарийского". – Кавказ и Византия, вып. 3, Ереван, 1982, с. 180-21.

Բրս. յուդիտ., ծն. – Հապավումները վերաբերում են Բարսեղ Կեսարացուն՝ Կիմ Մուրադյանի հրատարակության պատրաստած անտիպ ճառերին, որ հանգուցյալ Հեղինակը ժամանակին սիրահոփար տրամադրել էր մեզ մեքենագիր վիճակում:

Դ Պրրփ. – Դ ա լ ի թ Ա ն յ ա Ղ թ, Վերլուծություն ներածութեանն Պրոփիլերի, համահավաք քննական բնագիրը, թարգմանությունը գրաբարից ռուսերեն, առաջաբանն ու ծանոթագրությունները Ս. Ս. Արևշատյանի, Երևան, 1976. հունարեն սկզբնագիրը հղվում է ըստ հետևյալ հրատարակության՝ Davidis in Porphyrii Isagogen Commentarium in Davidis Prolegomena et in Porphyrii Isagogen Commentarium, ed. A. Busse (Commentaria in Aristotelem Graeca, XVIII 2), Berolini, 1904.

Նազ. 6. – Sancti Gregorii Nazianzeni Opera, Versio Armeniaca I, Orationes II, XII, IX, ed. a B. Coulie, Brepols-Turnhout, 1994 (Corpus Christianorum, Series Graeca 28, Corpus Nazianzenum 2).

<sup>79</sup> Ագաթանգեղոյ Պատմութիւն Հայոց, Տիգրիս, 1909, էջ 155.5:

<sup>80</sup> Կ ո Ր ի ւ ն, Վարք Մաշտոցի, ընագիրը և թարգմանությունը Մ. Աբեղյանի, Երևան, 1941, էջ 28:

<sup>81</sup> J o s. J. S. W e i t e n b e r g. Linguistic Continuity in Armenian Hellenizing Texts, *Le Museon*, t. 110, fasc. 3-4, 1997, pp. 447-458.

Նիւս. Կ. Մ. – Կ. Մ ու լ Ր ա գ յ ա ն, Գրիգոր Նյուսացին հայ մատենագրության մեջ, Երևան, 1993:

Փիլ. լին. – Փիլոնի Հերրայեցւոյ Մեկնութիւն ծննդոց և ելից, ճառք ի Սամիսոն, ի Յովնան, աշխատասիրութեամբ Մ. Աւագրեանց, Վենետիկ, 1826:

Փիլ. ալլաբ., իմաստ., տես., քհ. – Փիլոնի Հերրայեցւոյ ճառք որոց հելլեն ընագիրք հասին առ մեզ, Վենետիկ, 1892.

PG – Patrologiae cursus completus, Series Graeca, ed. J. P. Migne, Brepols-Turnhout.

Philo I, VI, VII, IX – Philo in ten volumes, with English Translation by F. H. Colson, G. H. Whitaker, Cambridge Mass., London (Loeb Classical Library), 1958-1968.

## ВЛИЯНИЕ ГРЕЧЕСКОГО В ПЕРЕВОДАХ КЛАССИЧЕСКОГО ПЕРИОДА

Г. С. МУРАДЯН

Р е з ю м е

Наиболее ранние древнеармянские переводы с греческого отличаются приверженностью переводчиков к исконно армянским способам выражения, к формальной независимости от оригинала. Влияние греческого в сфере словообразования, синтаксиса и морфологии свойственно переводам “грекофильской школы”, в которых формальное подражание оригиналу систематично и вполне осознано. Оно прослеживается уже в так называемых “предгрекофильских” переводах, однако и в переводах классического периода встречаются неологизмы-кальки с греческих слов, в основном сложных, интересные семантические кальки, а также отдельные случаи влияния греческого синтаксиса.

## THE GREEK INFLUENCE IN THE TRANSLATIONS OF THE CLASSICAL PERIOD

GOHAR MURADYAN

S u m m a r y

The earliest Old Armenian translations from Greek are marked by genuine Armenian idiom and formal independence from the original. The Greek influence on the lexicon, syntax and morphology is characteristic of the translations of the “Hellenizing school”, in which the formal imitation of the original was systematic and quite conscious. It is obvious already in the so-called pre-Hellenizing translations, but in the translations of the classical period too there occur neologisms calked from Greek words, mainly compounds with two roots, interesting semantic calks and some cases of the influence of the Greek syntax.